ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17 հուլիսի 2018 թվականի N 91-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 84-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի հուլիսի 12-ի *«Մ. Զաքարյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* N 84-Ա կարգադրության 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կամ առաջարկված թեկնածուի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Մնահիտ Մարզպետի Գարեգինյանին:***»:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի հուլիսի 17
ք. Հրազդան